ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____20 ԹՎԱԿԱՆ Ն _ Ն

ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ, ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի Ն 194-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1.Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող, Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանն ամրացված տրանսպորտային միջոցը՝ համաձայն հավելվածի, հետ վերցնել և ամրացնել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեին:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկշաբաթյա ժամկետում Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համատեղ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշման հավելվածում նշված ավտոմեքենայի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը:

2) սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո երկշաբաթյա ժամկետում ապահովել սույն որոշման հավելվածում նշված ավտոմեքենայի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառումը՝ դրա հետ կապված ծախսերն իրականացնելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի միջոցների հաշվին:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների հատկացման, շահագործման և սպասարկման մասին» Ն 194-Ն որոշման՝

1) N 1 հավելվածի 5^5-րդ կետի զ) ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեին՝ 6 ավտոմեքենա,»

2) N 1 հավելվածի 5^5-րդ կետի ժդ) ենթակետում «6» թիվը փոխարինել «5» թվով

3) N 2 հավելվածի 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

10.	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	6	1	5

4) N 2 հավելվածի 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

15.	ՀՀ քաղաքաշինության կոմիտե	6	1	5

5) N 2 հավելվածի վերջին տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

	Ընդամենը	1833	632	1201

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
-------- – ի N - որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԱՄՐԱՑՎՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԸ

N/Ն ը/կ	Մակնիշը, նույնականացման համարը	Պետական համարանիշը	Թողարկման տարեթիվը	Ձեռքբերման տարեթիվը	Սկզբնական արժեքը (ՀՀ դրամ)	Վերագնահատված արժեքը 11.03.2017թ (ՀՀ դրամ)	Հաշվեկշռային արժեքը 15.05.2020թ. (ՀՀ դրամ)
1.	HYUNDAI SONATA2.0 KMHEB41B7BA147125	262 LL 60	2010թ.	10.02.2011թ.	10000000	5370000	3662282,6

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Գույք հետ վերցնելու, ամրացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 194-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

Անհրաժեշտությունը

Սույն նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեին բնականոն գործունեության ապահովման և Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանն ամրացված ավտոմեքենաների թվի օպտիմալացման և ֆինանսական միջոցների խնայողության պահանջից ելնելով:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ ՀՀ կրթության և գիտության, ՀՀ մշակույթի և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունների միաձուլման և նոր՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) ստեղծման հետևանքով ներկայումս նախարարությանը սպասարկող ավտոմեքենաների թիվը՝ 7-ն է:

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվիրատվությամբ առաջիկայում նախատեսվում են կրթական օբյեկտների մեծածավալ շինարարական (այդ թվում նախագծային) ծրագրեր, որոնց գերակշիռ մասը տեղակայված է ՀՀ մարզերում:

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորվել են ծախսային ծրագրեր, որոնք շարունակական են նաև 2020 թվականին.

1. շուրջ 2.4 մլրդ դրամի ՀՀ մարզերի և Երևան քաղաքի թվով 8 հանրակրթական դպրոցների, թվով 2 գյուղատնտեսական քոլեջների, թվով 2 մշակութային և թվով 1 մարզական օբյեկտի ընթացիկ շինարարական աշխատանքներ,
2. շուրջ 116.0 մլն.դրամի ՀՀ մարզերի թվով 22 մոդուլային դպրոցների, ՀՀ մարզերի և Երևան քաղաքի թվով 4 գյուղատնտեսական քոլեջների, թվով 5 ավագ դպրոցների ընթացիկ նախագծային աշխատանքներ:

Բյուջետային տարվա ընթացքում նախատեսվում է.

Շինարարական ծրագրերի մասով՝

- մեկնարկել ՀՀ մարզերում փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական թվով 22 դպրոցների մոդուլային շենքերի կառուցման աշխատանքները,
- ավարտին հասցնել 2017 թվականին սկսված ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի գյուղատնտեսական և ՀՀ Լոռու մարզի ք.Վանաձորի Միքայել Թավրիզյանի

անվան պետական քոլեջների վերակառուցման աշխատանքները և օբյեկտները հանձնել շահագործման:

Նախագծային Ծրագրերի մասով՝

- ավարտին հասցնել ՀՀ 2019-2020 թվականների պետական բյուջեների միջոցների հաշվին ֆինանսավորված և դեռ մասնակի և/կամ ամբողջապես չֆինանսավորված ՀՀ մարզերի և Երևան քաղաքի ընդհանուր թվով 50 հանրակրթական և ավագ դպրոցների, միջին մասնագիտական կրթության հաստատությունների, մարզական օբյեկտների կառուցման/վերակառուցման, բազմակի կիրառման օրինակելի (մանկապարտեզների) նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքները,
- մեկնարկել և համակարգել ՀՀ մարզերի թվով 8 և Երևան քաղաքի թվով 2 հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցների նոր մարզադահլիճների կառուցման նախագծային աշխատանքները,
- համակարգել դեռ չֆինանսավորված ՀՀ մարզերի 14 և Երևան քաղաքի 6 միջնակարգ և հիմնական դպրոցների մարզադահլիճների վերակառուցման նախագծային աշխատանքները,
- համակարգել դեռ չֆինանսավորված ՀՀ մարզերի թվով 3 և Երևան քաղաքի թվով 1 ավագ դպրոցների շենքային պայմանների բարելավման նախագծային աշխատանքները :

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվիրատվությամբ իրականացվող շինարարական ծրագրերի համակարգման և վերահսկողության համար տրամադրվող հերթապահ ավտոմեքենաների քանակը նվազ է (մինչև 2) և նման ծավալի աշխատանքների կատարման համար ոչ բավարար:

Նշված ծրագրերի վերահսկողության ու համակարգման արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ են լրացուցիչ մարդատար ավտոմեքենաներ:

Նախարարությունը քննարկելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեին առաջարկությունը և ելնելով ավտոմեքենաների թվի օպտիմալացման և ֆինանսական միջոցների խնայողության պահանջից չի առարկում Նախագծի հավելվածում նշված ավտոմեքենայի սահմանված կարգով հանձումը Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեին:

Կարգավորման նպատակը

Սույն նախագծի ընդունմամբ կկարգավորվի Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե բնականոն գործունեությունը և կխնայվի ֆինանսական միջոցներ:

ՏԵՂԵԿԱՆՔ

Կառավարության «Գույք հետ վերցնելու, ամրացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 194-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ շահագրգիռ մարմինների կողմից ստացված կարծիքների ամփոփման վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակ, գրության ստացման ամսաթիվ, գրության համար	**Առարկության, առաջարկության բովանդակություն**	**Եզրակացություն**	**Կատարված փոփոխություններ**
1	2	3	4
1.Տարածքային կառավարման և ենթակառուցվածք-ների նախարարություն **21.05.2020թ. հ. ՍՊ//13550-2020**	Առաջարկվում է. 1.Անհրաժեշտ է Նախագծի վերնագրի «մասին» բառը հանել, քանի որ այն կրկնվում է: 2.Նախագծի 2-րդ կետի 2)-րդ ենթակետի «կոմիտեին» բառը փոխարինել «կոմիտեի միջոցների հաշվին» բառերով: 3.Նախագծի 3-րդ կետի 2)-րդ ենթակետի հիմքով փոփոխության ենթարկել նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N194-Ն որոշման Հավելված N 2-ի «Ընդամենը» տողի համապատասխան սյունակները:	1.Ընդունվել է 2.Ընդունվել է 3.Չի ընդունվել, քանի որ սյունակների հանրագումարները ճշգրիտ չեն:	1.Խմբագրվել է 2.Խմբագրվել է 3. լրացում չի կատարվել
2. ՀՀ ոստիկանության «Ճանապարհային	Առաջարկություններ և առարկություններ չունի		

ոստիկանություն» ծառայություն **22.05.2020թ. հ. 14/7/19399-20**			
3. ՀՀ քաղաքաշինության կոմիտե **25.05.2020թ. հ. 01/16.1/3456-2020**	Առաջարկում է. 1. Նախագծի 2-րդ կետում «ղեկավարին» բառը փոխարինել «նախագահին» բառով: 2. Նախագծի 3-րդ կետը լրացնել նոր հետևյալ ենթակետերով. 3) N 1 հավելվածի 5^5-րդ կետի զ) ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե՝ 6 ավտոմեքենա,» 4) N 2 հավելվածի 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «15. ՀՀ քաղաքաշինության կոմիտե 6 1 5».	1.Ընդունվել է 2.Ընդունվել է 6 1 5». 6 1 5».	1.Խմբագրվել է 2.կատարվեն լրացումներ
4.Ֆինանսների նախարարություն **27.05.2020թ. հ. 01/8-2/7596-2020**	Նախագծով նախատեսվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանն ամրացված մեքենաներից մեկը (2010թ. արտադրության) հետ վերցնել և ամրացնել ՀՀ քաղաքաշինության կոմիտեին (այսուհետ՝ Կոմիտե), միաժամանակ 1-ով պակասեցնելով ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 194-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) նախարարությանը սպասարկող ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակը:	**1.**ՀՀքաղաքաշինության կոմիտեն 11.06.2020թ. հ.01/16.1/4034-2020 գրությամբ հաստատել է 1 (մեկ) ծառայողական ավտոմեքենայի անհրաժեշտությունը պայմանավորված կոմիտեի կողմից	

	Նախագծին կից ներկայացված տեղեկանք-հիմնավորման համաձայն, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվիրատվությամբ իրականացվող շինարարական ծրագրերի համակարգման և վերահսկողության համար տրամադրվող հերթապահ ավտոմեքենաների քանակը բավարար չէ (մինչև 2 մեքենա), և Նախարարության կառավարման ներքո գտնվող ոլորտներում իրականացվող քաղաքաշինական ծրագրերի վերահսկողության ու համակարգման արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ են **լրացուցիչ** մարդատար ավտոմեքենաներ: Նշվածից ենթադրվում է, որ տրանսպորտային միջոցը Կոմիտեին ամրացնելուց հետո 1-ով ավելացվելու է նաև Կոմիտեի սպասարկող մեքենաների քանակը և պահպանման ծախսը: Մինչդեռ, բյուջետային ֆինանսավորման հայտի շրջանակներում ներկայացված տեղեկանքի համաձայն, Կոմիտեի հաշվեկշռում առկա է 5 տրանսպորտային միջոց, 1-ը՝ ղեկավարին սպասարկող, 4-ը՝ հերթապահ (2010թ. և 2013թ. արտադրության), և ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պահպանման ծախսերում նախատեսված է նույնքան մեքենայի պահպանման ծախս: Այս կապակցությամբ, առաջարկում ենք մեկ անգամ ևս քննարկել Նախագծով նախատեսվող տրանսպորտային միջոցը Կոմիտեին ամրացնելու նպատակահարմարության	համակարգվող շինարարական ծրագրերի էական ավելացմամբ:	

	հարցը, հաշվի առնելով, որ այն չի համապատասխանում ՀՀ վարչապետի՝ ծառայողական ավտոմեքենաների քանակը պակասեցնելու վերաբերյալ N 02/04.5/7658-2019 հանձնարարականի պահանջներին: 2.Միաժամանակ, առաջարկում ենք համապատաս-խանաբար ճշտել նաև Որոշմամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի համար սահմանված ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակը՝ հաշվի առնելով, որ հիշյալ Որոշմամբ դեռևս շարունակում են սահմանված մնալ ՀՀ քաղաքաշինության նախարարության տվյալները	2.Ընդունվել է	2.Նախագծում կատարվել է լրացում
5. Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն **03.06.2019թ. h. 01/17.1/2886-2020**	Առաջարկություններ և առարկություններ չունի		
6.ՀՀ քաղաքաշինության կոմիտե **11.06.2020թ. h. 01/16.1/4034-2020**	«Գույք հետ վերցնելու, ամրացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 194-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծով Քաղաքաշինության կոմիտեին 1 (մեկ) ծառայողական ավտոմեքենայի տրամադրումը պայմանավորված է կոմիտեի կողմից համակարգվող շինարարական ծրագրերի էական ավելացմամբ :	Չի ընդունվել ԿԳՄՍ նախարարությունը նպատակահարմար չի գտնում 2020 թվականի պետական բյուջեում կատարել վերաբաշխում, քանի որ մինչև տարվա վերջ	

	Միաժամանակ առաջարկում ենք մեքենայի պահպանման և շահագործման համար ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել առաջարկություն՝ Քաղաքաշինության կոմիտեի ծախսերը 6 ամսվա կտրվածքով ավելացնելով 600.000 դրամ գումարի չափով, «Մեքենաների պահպանում և ընթացիկ նորոգում» տնտեսագիտական դասակարգման հոդվածով:	մեքենայի պահպանման և ընթացիկ նորոգման ծառայության համար կնքվել է գնման պայմանագիր	
7. ՀՀ արդարադատության նախարարություն **13.07.2020թ. h. 01//14787-2020**	Առաջարկվում է 1. «Գույք հետ վերցնելու, ամրացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 194-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի /այսուհետ՝ Նախագիծ/ 3-րդ կետի 1-ին ենթակետում «կոմիտե» բառն անհրաժեշտ է փոխարինել «կոմիտեին» բառով: 2. Նախագծով հաստատվող հավելվածի վերնագրում «ՑԱՆԿ» բառն անհրաժեշտ է հանել, իսկ «ՄԻՋՈՑԻ» բառը փոխարինել «ՄԻՋՈՑԸ» բառով, քանի որ Նախագծին կից հավելվածով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեին ամրացնել	1.Ընդունվել է 2.Ընդունվել է	1.Խմբագրվել է 2.Խմբագրվել է

	միայն մեկ տրանսպորտային միջոց:		